

468

1916 № 788

6177

Երկրորդ տպագրութիւն

ՐԵՆՍԵԻՏԿԻ

ИМПЕРАТОРСКА
ВОСТОЧНО-СИБИРСКАЯ
АКАДЕМИЯ НАУК
СССР

ԵՍՄԵՌԱՅ

Վոզկիլ 1 գործողութեամբ

Թարգմանութիւն Ս. ԹՈՐՈՍԵԱՆԻ



ԹԻՖԼԻՍ

Տպարան «ԷՊՕԽԱ» Մուգ. պեր. № 8.

1915

891.71
—
Կ-82

ՆԿ 33
5513

Ն 30
6177

891-71
Մ-82

30 OCT 2006

25 NOV 2010

Երկրորդ ապագրութիւն

ՄԵՆՆԻՑԿԻ

ԵՍ ՄԵՌԱՅ

Վօդէիլ 1 գործողութեամբ

Թարգմանութիւն Ս. ԹՈՐՈՍԵԱՆԻ



ИНСТИТУТ
ЛИНГВИСТИКИ
Академии Наук
СССР

ԹԻՅԼԻՍ

Տպարան «ԷՊՕԽՍ» Մուգ. պիւր. № 8.

1915

03 JUL 2013

12.160

000 000 000

Настоящая пьеса, подь заглавиємъ „Я умерь“, переводъ С. Горбоянъ, разрѣшена Намѣстниксмъ ЕГО ИМПЕРАТОРСКАГО ВЕЛИЧЕСТВА на Кавказѣ, для представленія на сценахъ края. (Отзывъ Канцеляріи за № 3890-912, 18 февраля 1912 года, гор. Тифлисъ).



60365-67

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ,

Անդրէյ Իվանովիչ Մուխարովկին:
Օլգա Վասիլենա, զրա կինը:
Մերգէյ Պետրովիչ Տանէկ, զրանց տան
տէրը:
Ստեփան, Մուխարովկինի ծառան:
Գործակառար:

(Երեւ սենեակ երրորդական ծառայով: Բեմի մէջտեղը դիվան. ձախ՝ զրասեղան իր պարագաներով, հեռախօս եւ գրքոյկ: Աջ եւ ձախ դռներ: Վարագոյրը բարձրանալիս Մուխարովկինը պարկած է դիվանի վրայ, ծածկած սաւանով: Ստեփանը կանգնած է նրա մօտ եւ լսիս է բարձրաձայն:)

ՍՏԵՓԱՆ. (Ուսին սրբիչ): Կատարեալ ննջեցեալ, տէր-Ասուած, տէր-Ասուած. և ինչ անսպասելի .. ժողովարանից վերադարձաւ, բարձրացաւ սանդուխքներից և հէնց դռների մօտ թոխք, վայր ընկաւ և հոգին հանգուցելոց .. (Քլաննագին հեծկտում է): Վայնն ինչ ջան, ինչ ջան, ինչ ջան, ես այդպիսի յիմարութիւն քեզանից չէի

սպասում .. երիտասարդ... առողջ, գեղեցիկ... Անտէր մնան այդ ժողովարանները... երևումէ մեծ գումար է տարւել... վշտից աղիքները շուռ են կէլ, սիրտը տրաքուել ու ամէն: Եւ ինչ մարդ էր, ինչ մարդ, ոսկի էր և ոչ թէ մարդ: Ո՛չ բարկացկոտ, ոչ պահանջող, ոչ մի բանով նման չէր իր կնօջը, տիրուհու, և ամեն բանում հաւատում էր ինձ... ամեն բանում: „Ստեփան, մի՞թէ բոլոր սիգարները ծխել եմ“: բոլորը աղա ջան.. „Դէ ուրեմն գնա և գնիր նոր արկըր“... Իսկ հանգուցեալի սիգարները 100 հատը 30 բուբուռց պակաս չէր լինում... և յանկարծ... վայ աղա ջան, աղա ջան .. գլխիդ մեռնեմ աղա ջան... „Ստեփան, կարծես զգեստս ինձանից բաժանւել է ուզում հ՛ը“ .. Շատ ճիշտ էք հրամայում, աղա ջան, հնացել է... „Ուրեմն վերցրու քեզ լինի, այլևս ինձ պէտք չէ“... Դէ հիմա գնա, գտիր այսպիսի աղա և նրան ծառայիր.. (լալիս է ըարճրաձայն). վայ աղա ջան, աղա ջան, չարդ տանեմ աղա ջան, աչքս կուրանար քեզ էս օրը չը տեսնէի...:

ՍՏԵՓԱՆ և ՕԼԳԱ

ՕԼԳԱ. — (Մտնում է շտապ և անհանգիստ): Ստեփան, ինչ ես անում այստեղ ..

ՍՏԵՓԱՆ. — Էլ ինչ պէտք է անեմ լաց եմ լինում...:

ՕԼԳԱ. — Բեկանից այդ ոչ ոք չի խնդրում:

ՍՏԵՓԱՆ. — Ես առանց խնդրելու եմ լաց լինում: Աղայիս չեմ կարողանում մոռանալ շատ եմ ափսոսում... ինչ աղա էր, զարմանալի, զարմանալի մարդ էր:

ՕԼԳԱ. — Ինքնաեռ պատրաստ է:

ՍՏԵՓԱՆ. — Այո:

ՕԼԳԱ. — Իսկոյն ևեթ տար սեղանատուն:

ՍՏԵՓԱՆ. — Լսում եմ: (կողմը). Օ՞տէր իմ Ասուած, տէր իմ Ասուած... մի՞թէ թէյի ժամանակ է, և ինչ ախորժակ ունի թէյ խմելու .. վայ աղա ջան, աղա ջան (կանչելով և լալով, գնում է):

ՕԼԳԱ. — Ախ խեղճ Անդրէյ, մեռնել և այսպէս անսպասելի — դա սարսափելի է: Առհնը, սրա հետ յաճախ էր ու-

շագնացութիւն պատահում, և այդ հիւ-
 ւանդութիւնը ստացաւ անխիճեալ ժո-
 դովարաններում, բայց, ևս երբէք չէի
 սպասում այսպիսի դիպակածի: Մեռաւ...
 և ահա ևս այրի եմ՝ — սարսափելի է:
 Բայց և այնպէս պէտք է կարգադրու-
 թիւններ անել թաղման համար... Սեր-
 գէյ Պետրովիչը տանը չէ, ի՞նչ արած,
 ստիպած ևս պէտք է ամեն ինչ հո-
 դամ: (Շտտպ լօտնետում է հեռախօ-
 սին և զանգահարում): Համար, 383-
 25... ի՞նչ, 25 և ոչ թէ 35... այո՛,
 այո՛, շնորհակալութիւն... (սլառուալից
 յետոյ): „Թաղման գրասենեակից“,
 ք՛ր... գիտէք... մեզ մօտ ննջեցեալ
 կայ... ի՞նչ, ինչ յիմարութիւն... իս-
 կական ննջեցեալ, ամուսինս մեռաւ,
 հասկանում էք. ամուսինս, այո՛. .
 ի՞նչ, որտեղ եմ ապրում, ձեր գրա-
 սենեակից երեք տուն վերև, Տա-
 նէկի տանը . այո՛, բնակարան №
 7, այո՛ . ինչով կարող էք ծա-
 սայել . տարօրինակ հարց, յարութիւն
 տալ իմ ննջեցեալին դուք չէք կա-
 բող, ինչ կարիք կայ շատախօսելու —
 ուրեմն հարկաւոր է թաղել... ի՞նչ, ինչ

տեսակի՞, առաջին, այո՛ առաջին տե-
 սակի, իսկ որքան կարծենայ. ի՞նչ, դա
 հօ կատարեալ թաղան է... լսեցէք, ևս
 ձեզ հարսանիքի պատեր չեմ տալիս,
 այլ թաղման, հասկանում էք, թաղ-
 ման... իսկ երկրորդ կարգի թաղումը
 որքան . գիտէք ինչ, ևս ձեզ ուղղակի
 կասեմ, որ դուք շատ, անաստուած
 թանգ էք թաղում, իմ հարսանիքը
 ինձ աւելի արժան նստեց քան... դէ ի
 հարկէ բոլորը պէտք է ձերը լինի, եր-
 գեցիկ խումբ, հոգեհանգիստ, դիա-
 կառք, մի խօսքով բոլոր ձեռնարկու-
 թիւնները... Ասացէք խնդրեմ իսկ Յ-րդ
 կարգի թաղումը . ի՞նչ... և ոչ մի զի-
 ջողութիւն... և միթէ չի կարելի փոքր
 ինչ արժան . անխ այդ ձեր տակսանե-
 րը . դէ, ինչ արած, թող այդպէս լի-
 նի, նեղութիւն կրէք ուղարկել ձեր
 մարդկանցից որևէ մէկին վերցնելու
 հանգուցեալի չափսը, դադարի համար
 այո, այո, իսկոյն .

ՕՂԳԱ և ՍՏԵՓԱՆ

ՍՏԵՓԱՆ. — (Մտնում է լսյով): Թէ՛լը
 պատրաստ է:

Օլ' ԳԱ. - Վերջապէս, պէտք է լսեն
թէ ոչ, դու ինձ ջղայնացնում ես...
(միջոց). Ստեփան:

ՄՏԵՓԱՆ. - Ինչէք հրամայում . բայց,
(շարունակելով լացը). բայց ես չեմ
կարողանում մոռանալ, շատ եմ արի-
ստում արայիս...

Օլ' ԳԱ. - Անձ թէ ի՞նչ .. իսկ դու
կարծումես ես չեմ արիստում, ի՞նչ է:

ՄՏԵՓԱՆ. - Է՛հ, ձեզ ի՞նչ... բայց ի՞նչ
կլինի իմ գրութիւնը առանց արա-
յիս . Համեցէք թէյ խմելու...

Օլ' ԳԱ. - Ստեփան, գնա բժիշկ Պրա-
տասովի մօտ...

ՄՏԵՓԱՆ. - Շատ բարի...

Օլ' ԳԱ. - Եւ կը խնդրես, որ իսկոյն
գայ այստեղ...նա բժշկումէր հանգու-
ցեալին և ի հարկէ կիմանայ Անդրիւ-
շայի մահւան պատճառը:

ՄՏԵՓԱՆ. - Էլ ինչ պատճառ, մե-
ռաւ էլի .

Օլ' ԳԱ. - Բացի զբանից, յայտնիր
նաև ոստիկանութեան, այդ անհրա-
ժեշտ է, շտապիր:

ՄՏԵՓԱՆ. - Շատ բարի, ոստիկանա-
տունը մեր զիմացնէ, իսկոյն տմեն

ինչ կը կատարեմ . Օ՛ տէր իմ Աստ-
ւած, տէր իմ Աստուած... (զնում է):

Օլ' ԳԱ. - Օ՛հ... որքան զխացաւանք
ու անհանգստութիւն, և այս բոլորը
այսպէս անսպասելի. երեկ երեկոյեան
ժողովարանից վերադարձաւ տուն և
մեռաւ . խօսք չունիմ լաւ սիւրբարից
է... ասենք այս բոլորը պէտք էր սպա-
սել Անդրէյ Իվանիչից: Բայց և այն-
պէս ես այնքան էլ դո՛հ չեմ... մեռաւ...
իսկ ես մինչև անգամ սգազգեստ չու-
նեմ... սա խայտառակութիւն է, կա-
տարեալ խայտառակութիւն: (ղուրս է
զնում յուզւած):

ՄՈՒԽԱԼ. - (Քնի մէջ): Ութնոց, ին-
նոց .. (արթնանում է) Բաւականին
քնել եմ... հետաքրքիր է ժամը քանիսն
է. (նայում է իր ժամացոյցին). Օ՛հ՛
արդէն 10-ն է: (վեր է կենում. վրա-
յից թափում են ծաղիկները): Այս
ի՞նչ է .. որա՞նց եմ ես .. դէ ի հարկէ
տանս... բայց այս ի՞նչ ծաղիկներ են,
այս ինչ է, սաւան... երեկ ես ժողո-
վարանումն էի... այն, այն, ժողովա-
րանում, յետոյ վերադարձայ տուն, ե-
կայ և... ան ան, նոր եմ հասկանում

թէ բանը ինչու՞ն է: Սանդուխթներից բարձրանալիս ես ինձ շատ վատ էի զգում, երևի ինձ հետ կրկին է ուշագնացութիւն պատահել, աւելի երկար քան առհասարակ... և ահա իմ սիրելի կինը, ինձ մեռելների կարգն է դասել... ես մեռել եմ, հն, հն, հն. սատանան տանի: Բայց, երեկ ինչպէս չէր գալիս ինձ այն անիծեալ կարտը, ինձ, մեռեալիս, տարւեցի աջ ու ձախ, երեք հարիւր բուրլուց մնաց միմիայն 40 կոպէկ: (Լսում է Օլգայի ծայրը). Կինս է, աւելի լաւ է պարկեմ, տես նեմ ինչ է պատահել իմ մահւանից յետոյ: (պարկում է):

Օ'ԼԳԱ.- (Մտնում է, ժտննում հեռախօսին եւ զանգահարում) Համար 483-47. . այո՛, այո՛, շնորհակալութիւն. որտեղից...տիկին Ավրօրայի խանութից... ա՛, այդ դժււր էք տիկին, շատ ուրախ եմ... ձեզ հետ խօսում է Օլ'գա Վասիլենա Մուխալովիկինան...այո՛, այո՛, չճանաչեցիք ձայնիցս, այդ շատ բնական է. դուք չէք կարող երևակայել թէ, որ աստիճան է ջղերս քայքայւած... սարսափելի . երևակայեցէք, ամուսի-

նըս ինչ անսպասելի սիւրպրիզ արաւ. . դուք ասում էք ինչ. սիւրպրիզ ..ամենազգուշի, ամենախայտառակ .. երևակայեցէք երեկ երեկոյեան վերադարձաւ ժողովարանից և . վախճանեց... գիտէք նրա հիւանդութիւնը . շնորհակալութիւն, շնորհակալութիւն. . բայց բանը նրանումն է, որ ես չուներ սև զգեստ այո՛, սգի զգեստ. դէ ի հարկէ, եթէ ես առաջուց դիտենայի, շատ բնական է, որ ձեզ առաջուց էլ կը պատւիրէի .յուսով եմ, որ չափս վերօցնելու կարիք չկայ. դէ ի հարկէ...ի սէր Աստծոյ, որքան կարելի է շուտ, շուտ կարեցէք և ուղարկեցէք... ինչ...ամենաէթանագին, ամենաէթանագին կըտորից...

ՄՈՒԽԱԼ.- Սատանան տանի, ինչ ինայողարար է ծախսում իմ մահւանից յետոյ:

Օ'ԼԳԱ.- (Շարունակելով): Այո՛, այո՛, այդպէս ուրեմն, այս երեկոյ...շատ գեղեցիկ. խորին շնորհակալութիւն. ցըտեսութիւն:

ՍՏԵՓԱՆ.- (Մտնում է): Բժիշկը դեռ քնած է, իսկ ոստիկանութեան՝ դռնա-

պանը յայտնեց... Ա՛խ, տէր Աստուած,
տէր Աստուած.. եկել է...

Օ՛լ ԳԱ. - Ո՛վ, դագաղ պատրաստողը:
ՍՏԵՓԱՆ. - Ոչ, տան տէրը.. Սերգէյ
Պետրովիչը:

Օ՛լ ԳԱ. - Խնդրիր, խնդրիր այստեղ,
շնուտ: (Ստեփանը գնում է). Օ՛հ, ինչ
սարսափելի է այս բոլորը, այրիանալ
և այսպէս անսպասելի. ո՛չ սգազգեստ,
ոչ տրամադրութիւն, բառիս-բուն նը-
շանակութեամբ ոչինչ...

Օ՛լ ԳԱ. և ՏԱՆԷՆԵԻ

ՏԱՆԷՆԵԻ. - (Մտնում է շտապ): Մի-
թէ իսկապէս մեռել է:

Օ՛լ ԳԱ. - Ինչպէս տեսնում ես սիրե-
լիս: Նրանից այդ սպասելի էր:

ՏԱՆԷՆԵԻ. - Այո՛, մտրդս ապրում է ա-
պրում և յանկարծ... բարի լոյս թան-
կագինս: (ուզում է համբուրել):

ՄՈՒԽԱԼ. - Լաւ բաներ եմ իմանում
մահւանիցս յետոյ ..

Օ՛լ ԳԱ. - Սերժ, այդ ի՛նչ ես անում.
դեռ հանգուցեալը չի ստանլ ինչպէս
կարգնէ, դու արդէն ցանկանում ես
համբուրել ինձ... դու չես յարգում իմ



հանգուցեալ ամուսնուն, Սերժ: С С С Р

ՏԱՆԷՆԵԻ. - Օ՛... Ընդհակառակը... ընդ-
հակառակ սիրելիս: (Մուխալովիինն):
Յարգելի և թանկագին հանգուցեալ
Անդրէյ. — ես քեզ չափազանց յարգե-
ցի, սիրեցի, որ դու հնարաւորութիւն
տւիր շատ կարճ ժամանակամիջոցում
ձանաչել քո գեղեցիկ և սիրունիկ կնո-
ջը. ես թանգ եմ գնահատում քո կա-
պակցութիւնը ժողովարանների հետ,
որի շնորհիւ, միայն, մենք չէինք
ձանձրանում քո բացակայութեան մի-
ջոցին:

ՄՈՒԽԱԼ. - Ա՛խ դու անասուն:

ՏԱՆԷՆԵԻ, ճիշտը ասած թանկագինս,
ես այնքան գոհ եմ, որ սիրելի Ան-
դրիւշան մեռաւ, այնքան, որ մինչև
անգամ պատրաստ եմ նրան համբուրել:

ՄՈՒԽԱԼ. - Ապա մէկ փորձիր:

ՏԱՆԷՆԵԻ. - Օ՛լ դա, սիրելիս, դու չես
կարող երեւակայել, թէ որքան բախ-
որ եմ զգում ինձ... վերջապէս դու ա,
զատ ես, և իմը կը լինես, միմիայն
ինձ էլը պատկանես, միմիայն ինձ:

Օ՛լ ԳԱ. - Ա՛խ, Սերժ, նախ և առաջ
կատարենք մեր պարտականութիւնը,

Թաղենք, հողին յանձնենք նրան, ապա, յետոյ միայն խօսենք մեր ամուսնութեան մասին:

ՄՈՒԽԱՆԱՆ - Այդ դեռ կը տեսնենք, թէ ինչպէս կը թաղէք դուք ինձ:

ՏԱՆԷՆԵՒ - Շատ բարի, սիրելիս, ես այդ հասկանում եմ, և խնդրում եմ որ քեզ հանգիստ պահես, չը ջղայնանաս. ի հարկէ Անդրիւշայի քո ամուսինն էր, խօսք չունիմ, բայց չպէտք է մոռանալ նաև այն, որ նա, սիրելիս, ,,այնտեղ է՛, իսկ ես ,,այստեղ՛:

ՕՂ՛ԳԱՆ - Ա՛խ, Սերժ, այս բոլորը այնքան անսպասելի եղաւ, որ ես գլուխս բոլորովին կորցրել եմ: Երևակայիր եղել է նաև չորրորդ կարգի թաղումն իսկ ես պատահիբցի թաղել երրորդ կարգով:

ՏԱՆԷՆԵՒ - Ոչինչ ոչինչ սիրելիս, մի խնայիր, Անդրիւշայի համար չպէտք է խնայել, նա չափազանց լաւ ամուսին էր քեզ համար:

ՄՈՒԽԱՆԱՆ - Սրիկայ. դեռ գովում էլ է:

ՏԱՆԷՆԵՒ - Դէ սիրելիս, առայժմ ցը տեսութիւն. այս բոլորէս կը վազեմ և կը գնեմ մի գեղեցիկ պսակ, իմ թան-

ակզին Անդրիւշայի համար: ՕՂ՛գա, սիրելիս, հանգիստ պահիր քեզ և յիշիր, որ նա ,,այնտեղ է՛, Աստուած հողին լուսաւորէ, իսկ ես— ,,այստեղ՛: ցը տեսութիւն: (շտապ դուրս է գնում):

ՕՂ՛ԳԱՆ - Օ՛հ. ինչ բարի, ինչ հրաշալի մարդ է Սերգէյ Պետրովիչը. մի՞թէ կարելի է նրան համեմատել Անդրէյ Իվանիչի հետ... և ինչպէս ամուսնացայ այսպիսի անտանելի և չնչին մարդու հետ. սարսափելի է, ուղղակի սարսափելի: (վրդովւած դուրս է գլուխում):

ՄՈՒԽԱՆԱՆ Ես մեռել եմ. յամենայն դէպս այդ վճռուած է կնօջա կողմից, միայն չի ստորագրուած և վաւերացուած բժշկի և ոստիկանութեան կողմից... Անպիտաններ . . . ես ձեզանից շատ շնորհակալ կը լինեմ տիկին ՕՂ՛գա Վասիլենա, ի՞թէ իմ փոխանորդի ճակատին ևս նոյն կոտորները կպցնէք, որին արժանացրիք ինձ կենդանութեանս ժամանակ. ձեզ համար ի հարկէ այդ առանձին դժարութիւն չի լինի: Ստտանան գիտէ, թէ ի՜նչեր չես իմանայ քո մահանից յետոյ:

Կնօջ հաւատարմութիւնը մէկ, ընկերօջդ մտերմութիւնը երկու. ես հաւատացած եմ, որ անպիտան Տանէկը, իմ սառը դիակի վերայ մի գեղեցիկ պսակ կը դնէ, յամենայն դէպս ոչ պակաս քան 50 բրուրի արժողութեան... զեռ գերեզմանիս վրայ էլ արձան կը կանգնեցնէ հետեալ մակագրութեամբ — ,Ննջիբ թանկագին ընկեր, ննջիբ մինչև անեղ զատաստանի օրը“... նա ,այնտեղ է“ — իսկ ես ,այտտեղ“: Սրիկնայ, զգեւի անասուն: Իմ կարծիքով, ամեն մի օրի նաւոր ամուսին, եթէ նա ուզում է ճաշակել ամուսնական քաղցրութիւնը — երջանկութիւնը, հարկաւոր է, որ նա ստեպ ստեպ մեռնի. (ըրսից ձայն), կարծես, մարդ է զալիս... դէ, Անդրէյ Իվանիչ, մարշ սաւանի տակ:

ՍՏԵՓԱՆ և ԳՈՐԾԱԿԱՍՏԱՐ

ԳՈՐԾ. Որտե՞ղ է սիրելիս իմ թանկագին, ձեր հանգուցեալ ազան:

ՍՏԵՓԱՆ. Ահա այտտեղ է, սաւանի տակ... (Նայում է). կարծես կենդանի պարկած լինի... ճիշտ չեմ ասում.

ԳՈՐԾ. (Որ մինչ այդ նայում էր: Իսկապէս... ճիշտը ասեմ, սիրելիս, առաջին անգամն եմ պատահում այս պիսի ուրախ ննջեցեալի, կարծես պատրաստել է ոչ թէ գերեզմանատուն, այլ հանդէս դնալու: Երբեկցէ հիւանդացե՞լ է. .

ՍՏԵՓԱՆ. Երբէք. միայն երբեմն ուշագնացութիւն էր պատահում, իսկ ուշքի գալուց յետոյ, ամեն ինչ անցնում էր:

ԳՈՐԾ. Ամուսնացած է:


ՍՏԵՓԱՆ. Եւ այն էլ ինչպէս:

ԳՈՐԾ. Մի հարց եւ... ինչո՞ւ է այսպէս ուրախ, չլինի, կնօջից բաժանելուց... .

ՄՈՒՆԱՆ. Այս ապուշը այնքան էլ յիմար չէ երևում, ինչպէս ցոյց է տալիս իր արտաքինը:

ՍՏԵՓԱՆ. Գուցէ և հէնց այդպէս է, այնքան էլ հաշտ չէին... գիշերը կոխ ցերեկը կոխ, մի խօսքով, գիշեր ցերեկ տուրուղմիոց:

ԳՈՐԾ. Պատահում է, սիրելիս, աշխարհումս ամեն ինչ պատահում է, անկարելի ոչինչ չկայ:



ՄՏԵՓԱՆ. (Ուղղելով): Ո՞վ է գլուխը դարձրել այս կողմը...

ԳՈՐԾ. Հէնց ինքը կարող էր գառնալ... ասան խնդրեմ, սիրելիս, գիշերս մեռաւ...

ՄՏԵՓԱՆ. Ժամը 3 ին, լուսաբացին:

ԳՈՐԾ. Դեռ գիակը չի էլ սառել, զարմանալի է, ինչո՞ւ է այսպէս տաք:

ՄՏԵՓԱՆ. Տէր Աստուած, դուք ասում էք դիակը դեռ չի սառել... կենդանի չի՞ արդեօք:

ԳՈՐԾ. Կենդանիներից սիրելիս, միայն դերձակներեն են չափս վերցրնում... (չափում է). 2 արշին և 6 վերջոյ. (գրում է իր փոքրիկ տետրում). հէնց այդպէս էլ կը գրենք:

ՄՏԵՓԱՆ. Իագազը լաւը լինի, կադնի փայտից պատրաստեցէք:

ԳՈՐԾ. Երբորդ կարգի թաղման համաձայն, ննջեցեալներին, սիրելիս, հասարակ փայտի դադաղով ենք թաղում:

ՄՏԵՓԱՆ. Է՛հ, ամեն բանի ընդունակ է մեր տիրուհին... դադաղի համար իսկ խնայողութիւն է անում:

ՄՈՒԽԱԼ. Ես նրան խնայողութիւն

ցոյց կտամ:

ԳՈՐԾ. Գնացէք սիրելիս ձեր տիրուհու մօտ, և յայտնեցէք նրան, որ ես հանգուցեալի չափսը վերցրի, մի որևէ ուրիշ կարգադրութիւն չունի՞ արդեօք անելու:

ՄՏԵՓԱՆ. Իսկոյն... օ՛հ, օ՛հ, օ՛հ... (զննում է):

ԳՈՐԾ. Զարմանալի ուրախ ննջեցեալ է, կեանքիս մէջ առաջին անգամն եմ տեսնում... այն աստիճան ուրախ, որ թաղելը նոյնիսկ անխղճութիւն է:

ՄՏԵՓԱՆ. (Մտնում է): Լսել անգամ չուզեց, լաց է լինում և ծնկները ծեծում...

ԳՈՐԾ. Նա լաց է լինում, իսկ սա ծիծաղում է... աշխարհումս ինչէր չեն պատահում... ց'տեսութիւն սիրելիս:

ՄՏԵՓԱՆ. Տ'տեսութիւն ձերդ մեռելապետութիւն: (դուրս են գնում):

ՄՈՒԽԱԼ. Գրօղը տանի... բաւական հետաքրքիր է... բայց և այնպէս, եթէ ես այսպէս պարկած մնամ, սոքա ինձ կարող են իսկապէս թաղել... օ՞ճ... ո՞չ, ներողութիւն տիկին, ЭТОТЪ НОМЕРЪ

ЕЕ ПРОЙДЕТЬ. (վեր է կենում): Նախ
և առաջ հարկաւոր է յետաձգել իմ
թաղումը.. (Նայում է հնուախօսի գրք-
ըոյկին): ,,Թաղման գրասենեակ“ ..
որտեղ է. 383-25 (գտնում է № 1) իսկ
և իսկ... (զանգահարում է): Խնդրեմ,
բարի եղեք միացնել 383-25-ի հետ
այո, այո շնորհակալութիւն .. (միջոց)
Ո՞վ է խօսողը... Թ՛վ, դուք ինքներդ էք
մեռելներին այն աշխարհ փոխադրողը,
շատ ուրախ եմ: Լսեցէք, կարծեմ ձեզ
պատւիրել են պ-ն՝ Մուխալովկինի
թաղման համար պատրաստութիւններ
տեսնել . Մուխալովկինի, այո. շատ
գեղեցիկ ձեր ուղարկած մարզը եկաւ
և հանգուցեալի չափսը վերցրեց դա-
զադի համար. ի՞նչ, դուք ասումէք
թէ բանը ինչո՞ւն է. պ-ն Մուխալով-
կինի թաղումը պէտքէ յետաձգել...
անորոշ ժամանակով... ինչո՞ւ, շատ
պարզ, հէնց միայն այն պատճառով,
որ, երևակայեցէք ննջեցեալը յարու-
թիւն առաւ, կենդանացաւ, այո, այո,
կենդանացաւ. . դէ ի՞նչ կարող ես ա-
նել, չի ուղում մեռնել և վերջացաւ...
ի՞նչ, կատակ, սատանան տանի, ի՞նչ

կատակ, ինչէք ասում, ես շատ լուրջ
եմ խօսում... ի՞նչ, ով է խօսում ձեզ
հետ .. հէնց ինքը ննջեցեալը... հա, հա,
հա, վախեցաւ ողորմելին... (ոտքի
ձայն). օհօ... կարծես դարձեալ մարդ
է զալիս. . դէ, մարշ սաւանի տակ...
չէ որ ես մեռել եմ... (պարկում է):
ՄՏԵՓԱՆ. (Մտնում է. մատուցարա-
նով թէյ է բերում):

ՄՈՒՆԱԼ. Ստեփան . .

ՄՏԵՓԱՆ. - Այս ի՞նչ էր... տէր իմ Ասա-
ւած... այս ի՞նչ է լինում ինձ հետ .
կարծեմ, կարծեմ հանգուցեալի ձայնն
էր... (ղողղողում է. չի կարողանում
խօսել):

ՄՈՒՆԱԼ. Լսիր, իմ հոււատարիմ
Ստեփան...

ՄՏԵՓԱՆ. (Դողդողում է): Տէր - Յի-
սուս, Քրիստոս, հոգոցն հանգուցելոց
ննջեցեալի, մեր ազայի... քո ծառայ
Անդրէյի . . Տէր Յիսուս Քրիստ . .

ՄՈՒՆԱԼ. Դէ, խլացած ինչ է, սա-
տանան տանի քեզ...

ՄՏԵՓԱՆ. (Սարսափով): Մ՛ժօ . հե-
ռու . հեռու ինձանից... Հայր մեր, որ
յերկինս ես... սուրբ եղիցի... (ասելով

— 100 — 100 — 100 —

մատուցարանը ղևում է պատահած տեղը եւ փախչում):

ՄՈՒԽԱԼ. - Այս յիմարն իսկ վախեցաւ իմ յարութիւն աննելուց... բայց և այնպէս սաստիկ քաղցած եմ... նընջեցեալին չի խանդարում երբեմն մի փոքր նախաճաշել... (ուզում է վերցնել թէյը. ոտքի ձայն): Թաւ . զարձեալով որ գալիս է, թայլ չեն տայ մի բաժակ թէյ խմեմ: (պարկում է եւ սաւանը ծածկում):

ՏԱՆԷՆԵՒ ԵՒ ՍՏԵՓԱՆ

ՏԱՆԷՆԵՒ. - Ես քո մըթմըթոցից բան չեմ հասկանում... Ի՞նչ ես ասում...

ՍՏԵՓԱՆ. - (Սարսափից չի կարողանում մի որոշ բան ասել): Դղբը... վի... .

ՏԱՆԷՆԵՒ. - Սա կամ հարբած է, կամ ցնդել է. (Մօտենում է Մուխարովկինին): Բանը այն է, որ ես չգիտեմ թէ որտեղ դնեմ պսակը, հանգուցեալի գլխին, թէ ոտքերին... Ստեփան, չ'գիտես արդեօք, ննջեցեանի ի՞նչ տեղն են դնում պսակը...

ՍՏԵՓԱՆ. - Կի... կիկե... կենդ...

ՏԱՆԷՆԵՒ. - Ա՛, հասկանում եմ, կրծքի վրայ, այդպէս էլ կանենք... (ղնում է

կրծքի վրայ): Հանգչիր խաղաղութեամբ, թանկագին ընկեր և քնիր, քնիր հանգիստ անվրդով...

ՄՈՒԽԱԼ. - Կաշխատեմ...

ՏԱՆԷՆԵՒ. - (Վեր է թռչում): Ի՞նչ...

ՍՏԵՓԱՆ. - Բրբ. դբ... կկեն... կենդ...

ՏԱՆԷՆԵՒ. - Այդ դու էիր:

ՍՏԵՓԱՆ. - Կկկ. կեն... կենդ...

ՏԱՆԷՆԵՒ. - Տո՛ւ, հարբած, գրողը տանի քեզ... բողբոլ այս հարբածի մեղն է... ի հարկէ մեռել է. և ես ինչից վախեցայ... որտեղ է Օ՛լբա Վասիլենան. իշի գլուխ (շտապ դուրս է գնում):

ՍՏԵՓԱՆ. - Կկկ... կկենդ... (փախչում է):

ՄՈՒԽԱԼ. - Վերջին ընծան անկեղծ ընկերոջից. ինչ հրաշալի պսակ է... խկոյն երևում է, թէ ինչ շատ է սիրում ինձ— ինձ սիրելով հանդերձ միևնոյն ժամանակ կնօջս հետ սիրաբանութիւն է արել այն ժամանակ, երբ ես զբաղւած եմ եղել ժողովարանում թղթախաղով... ես չէի տխրում, կինս էլ զբաղմունք ունենալով, չէր գանդատում ձանձրոյթից... հետևապէս, պէտտէ շնորհակալ լինել մեր ընտանիքի բարեկամից: (Նսյում է ժամացոյցին):

ИМПЕРИЯ
ВОСТОЧНОЕВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Բայց և այնպէս, ժամանակ է ճանաչելու յուրեան գնարու: (դուրս է գնում):

ՕԼԳԱ և ՏԱՆԷԵՒ

ՏԱՆԷԵՒ - Ի հարկէ, ատերես հարկա-
որ է պահպանել որոշ պարկեշտու-
թիւն, թանկագինս, բայց երբ միայ-
նակ ենք ..

ՕԼԳԱ. - Բայց չէ որ նա դեռ այստեղ
է, միթէ դու այդ չես հասկանում ..

ՏԱՆԷԵՒ. - Շատ բարի, այստեղ է,
բայց չէ որ նա չի կարող վեր կենալ,
մօտենալ մեզ և ասել, ,,Դուք ինձ խա-
բել էք և ես այդ գիտեմ“:

ՄՈՒԽԱԼ (Մտնում է): ,,Դուք ինձ
խաբել էք, և ես այդ գիտեմ“:

ՕԼԳԱ. - (Ուշաթափ ընկնում է): Ա՛հ...

ՏԱՆԷԵՒ. - (Յոյնակէս) Ա՛հ...


ՄՈՒԽԱԼ. - Հանգստացէք, ես արգելք
չեմ հանդիսանայ ձեր երջանկու-
թեան... պ-ն ճանէն, դուք հէնց այսօր
կարող էք ամուսնանալ Օլգա Վասի-
լևնայի հետ, հէնց այսօր... ես մեռայ...
(կանչում է). Ստեփան ..

ՍՏԵՓԱՆ. - (Մտնում է սարսափած):

ՄՈՒԽԱԼ. - Վերարկուս, գլխարկս և
ձեռնափայտս...

ՍՏԵՓԱՆ. - Կկկ... կեն .. կենդա...

ՄՈՒԽԱԼ. - Ա՛հ, կենդանի եմ:



3111

12.160

ՔԱՐԳՄԱՆԷԱԾ ԵՆ.

491
500

1. Բրիտ. Զորանշների դպրոցը, 1 կօմ.
1 գործ.

2. Մեանիցկի. Ես մեռայ, փօղ. 1 գ.

3. Ֆենտովին. Իրամայի վերջաւորու-
թիւնը, գր. 1 գործ.

4. Կանանց թշնամին. մենախօսութիւն

5. Խարդախ սղամարդիկ. ,,

(Իերասան Ս. Քորոսեան:

ԻՆՆ Է 15 ԿՈՂԷՎ.

19
Л. П. П. П. П.
ВОСТОЧНОЕ
Академия Наук
СССР